

ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ՈՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Կարինե Բազեան

Վասպուրականը ժԹ. դարի երկրորդ կեսին Թուրքիայի ամենաընդարձակ եւ մարդաշատ նահանգներից մեկն էր, ուր հայերը միշտ էլ մեծամասնութիւն են կազմել եւ բացառիկ դեր խաղացել տարածաշրջանի տնտեսութեան մէջ՝ ճանաչուելով որպէս հմուտ արհեստաւորներ, լաւ այգեգործներ, երկրագործներ, անասնապահներ:

Վասպուրականի կենտրոնը, սիրտը Վանն էր՝ Արեւմտեան Հայաստանի ամենահայաշատ, ամենաառաջադէմ քաղաքը: Անգնահատելի էր նաեւ Վանի դերը արդիւնագործութեան եւ առեւտրի տեսակետից. այստեղ էր հաւաքւում նահանգի ողջ արտադրանքը եւ դուրս հանւում արտաքին շուկայ:

Վասպուրականի բնակչութեան տնտեսական զբաղմունքների մէջ կարեւոր տեղ են գրաւել տնայնագործութիւնն ու արհեստները,¹ որոնք, սակայն ամբողջական ու համալիր ուսումնասիրութեան չեն ենթարկուել եւ թերի են ներկայա-

ցուած: Բացառութիւն են կազմում ոսկերչութիւնը,² ասեղնագործութիւնն ու ժանեկագործութիւնը,³ որոնք բաւականին հանգամանօրէն հետազոտուել են մի շարք մասնագէտների կողմից եւ ջուհակութիւնը կամ շալագործութիւնը, որը մանրամասն ներկայացրել է Ե. Լալաեանը:⁴

Վասպուրականի միջնադարեան արհեստագործութեան մասին ուշագրաւ յօդուած է գրել Վ. Վարդանեանը, որը կարեւոր է տարածաշրջանի արհեստների պատմական հիմքը վերհանելու ու դրանց զարգացման գործընթացը ներկայացնելու համար:⁵

Վասպուրականի գիւղական բնակչութեան տնտեսական զբաղմունքների մէջ, ինչպէս նշուեց, երկրագործութեան ու անասնապահութեանը զուգահեռ, բաւականին զարգացած էին նաեւ տնայնագործութիւնն ու արհեստները, որոնց արտա-

1 Տնայնագործութիւնն ու արհեստը տնտեսական գործունէութեան լայն տարածում ունեցող ձեւեր են, որոնք զարգացած են եղել միջկապիտալիստական ժամանակաշրջանում: Տնայնագործութիւնը ապրանքի արտադրութեան այն եղանակն է, որն իրականացուել է հիմնական զբաղմունքներից զուգահեռ, տան պայմաններում, սեփական հումքով ու պարզ աշխատանքային գործիքներով եւ առաջին հերթին ուղղուած է ընտանիքի կարիքները բաւարարելուն: Արհեստը տնտեսական գործունէութեան հիմնական ձեւ է՝ եղել մասնագիտացուած բաժանմամբ ու արհեստավարժ աշխատուժի կիրառմամբ, որն իրականացում է յատուկ արհեստանոցներում, ձեռքբերովի հումքով եւ նիւթերով, կատարելագործուած աշխատանքային գործիքներով՝ պատուիրատուի կամ շուկայի պահանջարկը բաւարարելուն միտուած բարիքների արտադրութեամբ:

2 Տե՛ս Յովսէփ Թօքաթ, Հայ արծաթագործ վարպետներ, Լոս Անջելես, 2005, (թուրքերէն-անգլերէն):

3 Տե՛ս Ս. Դարեան, Հայկական ժանեակ, Երեւան, 1969; Առնի՝ Հայկական ասեղնագործութիւն, Երեւան, 1972; Կ. Բազեան, Վասպուրականի ասեղնագործութեան առանձնայատկութիւնները, - Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Երեւան 2013, էջ 280-288; Ս. Գալֆայեան, Վանի դարձի ասեղնագործ ժանեակները, - Հայաստանի մայրաքաղաքները, - գիրք I, Վան, Երեւան 2013, էջ 266-279:

4 Ե. Լալաեան, Տնայնագործութիւնը Վասպուրականում, Ծառախի շալագործութիւնը, - Ազգագրական հանդէս, գիրք XXV, Թիֆլիս, 1914:

5 Տե՛ս Վ. Վարդանեան, Արհեստագործութեան զարգացումը Վասպուրականում IX-X դարերում, - Պատմա-բանասիրական հանդէս, 1989, № 3, էջ 37-47:

դրանքը յաճախ բաւարարում էր ոչ միայն տեղական կարիքները, այլեւ դուրս էր գալիս արտաքին շուկայ: Քանի որ տնայնագործութիւնը համամասնօրէն էր տարածուած ողջ նահանգում, ուստի ներկայացնէր որոշակի արհեստաւորական արտադրութեամբ հանրայայտ բնակավայրերը: Այսպէս՝ Վասպուրականում մեծ պահանջարկ ունէին Թիմար (Տոսպ) գաւառի Զիրաշէն եւ Մամերտ գիւղերի բրուտների շինած ամանները: Զիրաշէնի կաւից ստացւում էին կարմիր, իսկ Մամերտի կաւից՝ սպիտակ ամաններ: Բրուտներն իրենց ամանները պատրաստում էին տարբեր նպատակների համար՝ ջուր կրելու, պարեն պահելու, եփելու, չորթան տրորելու, խմորի եւ լոդանալու, ինչպէս նաեւ թոնիր, սալ, ճրագ, ճրագկալ եւ այլն: Կային ամաններ, որոնց անուանել են տուփին, կանաչիկ: Միջին հաշուով իւրաքանչիւր բրուտ տարեկան 100-120 փուռ բրուտեղէն էր թրծում, որը տարեկան նրան բերում էր 48-50 հազար դուրուշ, որից նա բաժին էր հանում աշակերտներին, բանուորներին, վճարում էր պետական հարկը, կատարում էր այլ ծախսեր⁶:

Վասպուրականը հարուստ էր օգտակար հանածոներով, որոնց մշակումը հասոյթ ստանալու լրացուցիչ միջոց էր: Այսպէս՝ Կենդանանց գիւղի մօտ գտնուող քարհանքից գիւղի բնակիչները ջրաղացքարեր էին կըտրում, որը բաւականին վաստակ էր բերում նրանց⁷: Քարհատութեամբ էին զբաղւում նաեւ Բերդանց գիւղի բնակիչները: Այստեղի մոխրագոյն աւազաքարը խիստ հրակայուն էր, ուստի եւ յարմար հացի փռերի ու վառարանների համար, դրանից պատրաստում էին նաեւ

սանդ եւ հաւանք, որոնք բաւականին պահանջարկ ունէին տարածաշրջանում⁸:

Վանայ լճի ափին գտնուող Աւանց գիւղի բնակիչները զբաղւում էին նաւաշինութեամբ, նաւավարութեամբ եւ բորակահանութեամբ: Նրանք յունիս, յուլիս, օգոստոս ամիսներին լճի ջուրը բաց էին թողնում յատուկ պատրաստուած փոսերի մէջ եւ ջրի գոլորշացումից յետոյ կտրում էին փոսերում չորս մատ հաստութեամբ առաջացած բորակը, որն ուղարկւում էր Վան, Բիթլիս, Սղերդ, Պարսկաստան եւ այլ վայրեր: Գիւղի բնակիչները բորակ ստանալու զաղտնիքը ոչ ոքի չէին ասում եւ երբեք ուրիշ գիւղերից իրենց մօտ աշակերտ չէին վերցնում:

Բորակահանութեամբ զբաղւում էին շատ հին ժամանակներից, ինչի մասին է վկայում այն փաստը, որ «բորակաշէն վարպետք յարգանօք եւ երախտապարտ խոստովանութեամբ յիշատակեն զանուն սրբոյն Ներսէսի Պարթեւի թէ՛ սկիզբն գործոյն թէ՛ յետ գործադուլի միշտ յաղօթս իւրեանց երեկոյ եւ առաւօտ եւ համարեն զնա հիմնադիր եւ տէր սոյն օգտակար արհեստին»: Մ. Միրախորեանը վկայում է, որ աշխատանքը վերջացնելուց յետոյ բորակահաններն ասում էին. «Աստուած ողորմի Ներսէսի հոգւոյն»⁹:

Աւանցի բնակիչները զբաղւում էին նաեւ նաւաշինութեամբ եւ նաւավարութեամբ, նրանց առագաստանաւերը կոչւում էին զեամիներ, իսկ նաւավարները՝ զեամչիներ:

Նաւավարութեան մենաշնորհը Վասպուրականում պատկանում էր Աւանցի բնակիչներին, նաւահանգիստը (ապրկատեղը) գտնւում էր գիւղի մօտի լճափին, առագաստանաւերի թիւը հասնում էր մօտ 100-ի: Աւանցի նաւաստիներին յաջողուել

6 Բնիկ արհեստներ. Բրուտոյթիւն, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1906, թիւ 3060 և 3062:

7 «Արծուի Վասպուրականի», 1859, № 3, էջ 90:

8 Նոյն տեղում, էջ 63:

9 Տե՛ս Վան-Տոսպ, «Մուրճ», 1903, № 7, էջ 32:

էր «Վանայ լճի վրայ թիավարելու եւ ալիքների դէմ մաքառելու արհեստը իւրացնել եւ կատարելագործել: Ականատեսի վկայութեամբ առաքաստանաւերը գեղեցիկ էին իրենց «ձիւնի պէս սպիտակ առաքաստներով՝ ծովակի ջինջ կապոյտ մակերեւոյթի վրայ»:¹⁰

Արճեչի կենտրոն Ականց գիւղաքաղաքը եւս ունէր իր նաւահանգիստը, արհեստներից այստեղ զարգացած էին կօշկակարութիւնը, դերձակութիւնը, դարբնութիւնը, ոսկերչութիւնը, զինագործութիւնը, պայտարութիւնը:¹¹

Վանից ոչ հեռու գտնուող Սղգահ գիւղի բնակիչները լաւ խսիրներ էին գործում, որի հումքը վերցնում էին գիւղի մօտ գտնուող լճից. «աշնան եղանակին կը ժողուեն եւ ձմեռ մինչ ի գարուն գործելով՝ Վան քաղաք եւ ուրիշ տեղեր կը ծախեն»:¹²

Վասպուրականի բոլոր հայաբնակ ու հայկական բնակավայրերում զարգացած էին գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը: Արծկէում, Բերկիրիում, Հայոց ձորում դրանց զարգացած ու տարածուած լինելու մասին ազգագրական տեղեկութիւններ է հրապարակել Վարդան Թեմուրճեանը: Աղբակի հայերի գորգագործութեամբ զբաղուելու մասին, որպէս ականատես, հաղորդում է Րաֆֆին՝ «նրանք գիտեն իւրեանց անասունների բըրդից գործել հագուստի բոլոր պիտոյքները, որոնցից պատրաստում են վերարկուներ (ապա), շալուարներ, քաղախաներ, զանազան տեսակ օթոցներ, կապերտներ եւ այլն, որք վաճառքի նիւթ եւս դառնում են»:¹³

Վասպուրականում բազմաթիւ արհեստների կողքին յատկապէս զարգացած էր շալագործութիւնը, որով զբաղւում էին գերազանցապէս Վանում, Շատախ գաւառի Թաղ գիւղում,¹⁴ Մոկսում,¹⁵ Ոստան (Գաւաշ) գաւառի Նարեկ եւ Նորգիւղ գիւղերում¹⁶ եւ այլուր: Յիշեալ բնակավայրերում շալագործութիւնը ապրուստի հիմնական աղբիւրն էր: Մասնաւորապէս Շատախի Թաղ գիւղում, քարքարոտ տեղանքի ու վարելահողերի բացակայութեան պատճառով, այս արհեստը ակամայ դարձել էր բնակչութեան հիմնական զբաղմունքը: Արխիւային նիւթերի վկայութեամբ, աւանի բնակչութեան 50 %-ը շալագործներ էին, մնացածը զբաղւում էին ոչխարաբուծութեամբ եւ բրդագործութեամբ: Այստեղ, չնայած փայտանիւթի սակաւութեանը, զարգացած էին նաեւ փայտամշակութիւնն ու ածխագործութիւնը. կաղնու փայտից ստացուած ածուխը վաճառւում էր Վանում, իսկ փայտից պատրաստուած զանազան իրերը, կահոյքն ու աշխատանքային գործիքները գործածւում էին կենցաղային կարիքները հոգալու համար:¹⁷

Այլ արհեստներ, նոյն աղբիւրի համաձայն, Շատախ գաւառում զարգացած չէին. միայն գաւառի կենտրոն Թաղում գործում էին մեկ դերձակ, վեց սափրիչ եւ չորս դարբին: Վերջիններս աշխատանքային գործիքներ էին պատրաստում գաւառի ողջ բնակչութեան համար, որոնք ոչ թէ վաճառւում, այլ փոխանակւում էին գիւղատնտեսական մթերքներով՝ հասոյթը

10 Նոյն տեղում:

11 Հ. Պողոսեան, Վասպուրականի պատմութիւնից, էջ 21:

12 «Արծուի Վասպուրականի», 1859, № 8, էջ 209:

13 Ա. Պողոսեան, Վասպուրականի հարաւ-արեւելեան գաւառների հայոց գորգագործական մշակոյթի մասին, Բանբեր հայագիտութեան, 2014, թիւ 2-3, էջ 98-126:

14 Մանրամասն տես՝ Ե. Լալաեան, Տնայնագործութիւնը Վասպուրականում:

15 И.А. Орбели, Фольклор и быт Мокса, М., 1982, с. 37-38.

16 Հ. Պողոսեան, Վասպուրականի պատմութիւնից, էջ 23:

17 Ռ. Գարունեան, Շատախ գաւառի ազգագրական միջոցները, Հնագիտ. եւ Ազգագր. Ինստիտուտի Արխիւ, գործ № 14, էջ 205-208:

ստանալով աշնանը: Հետաքրքրական է որ, ըստ աւանդութեան, այս գիւղը հիմնադրել են Մոկսից գաղթած հայերը:¹⁸

Ինչ վերաբերում է Մոկսին, պէտք է նշել, որ գաւառի տնայնագործութեան ու արհեստների մասին բաւականին հետաքրքիր եւ խիստ արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Հ. Օրբելին: Ըստ նրա, գաւառի բնակիչները, բացի հացահատիկի, ծխախոտի մշակութիւնից ու անասնապահութիւնից, զբաղւում էին նաեւ բրդի մշակման հետ կապուած արհեստներով, մասնաւորապէս շալագործութեամբ, գգրարութեամբ ու թաղիքագործութեամբ, որոնք այստեղ յատկապէս զարգացած էին: Զուլհակութեան մասին տեղեկութիւնները, չնայած փոքր ծաւալին, բացառիկ նշանակութիւն ունեն հայկական գործուածքի ուսումնասիրութեան համար: Օրբելին գրում է. «ոչխարաբուծութիւնը մոկսեցիներին մատակարարում էր ոչ միայն սննդամթերքով, այլեւ Մոկսի հայերի ու քրդերի մէջ տարածուած ու շատ բնորոշ արհեստի՝ ջուլհակութեան համար անհրաժեշտ հումքով: Թել մանելու ու գործուածքի հումքի պատրաստումը կատարւում էր կանանց կողմից, սակայն դազգազի մօտ նստում էին միայն տղամարդիկ: Գործում էին ոչ միայն կոպիտ կտաւներ վուշի ու կանեփի թելերից, այլեւ բամբակեայ կտորներ՝ հարաւից ներկրուող բամբակից, ինչպէս նաեւ վուշից խիստ նուրբ գործուածքի տեսակներ, որոնք բատիստի նման էին եւ կոչւում էին «պատիսկ»: Սակայն Մոկսի համար ամենաբնութագրական գործուածքի տեսակը այսպէս կոչուած շալն էր, որը 35 սմ լայնութիւն եւ 7 մետր երկարութիւն ունեցող նեղ, բրդեայ նուրբ, քաթանատիպ գործուածքի շերտ էր: [...] Բրդեայ կտորները գործւում էին ինչպէս միագոյն՝ երկարութեամբ ձգուող 1-2

կարմիր թելերի գծերով, այնպէս էլ երկրաչափականացուած տարբեր ծաղկանախշերի կրկնուող շարքերով. մոկսեցի ու շատախցի ջուլհակները Մոկսի տարածքից դուրս էլ համարւում էին ամենավարպետ գործողները: Իսկապէս, զարդանախշերով հարուստ թանկ գործուածքներից մի քանիսն արտակարգ նուրբ ու ամուր էին, ընդ որում մոկսեցի ջուլհակները կարողանում էին փայտեայ (երկար տարիներ խոնաւացրած ընկուզենուց պատրաստուած) գուբի միջոցով դրանց տալ լրացուցիչ մուար՝ փայլփլուն դրոշմանկար, որը չէր ջնջւում երկար գործածութիւնից»:¹⁹

Մոկսի ու Շատախի բնակչութեան մէջ, ինչպէս վերը նշուեց, լայն տարածում ունէին նաեւ բրդի մշակումն ու թաղիքագործութիւնը, որոնք տեղի հայերի շրջիկ արհեստի ամենահիմնական ձեւերն էին, քանի որ քրդերը արտագնայ աշխատանքով չէին զբաղւում: Անշուշտ, գգրարութեամբ զբաղւում էին նաեւ այլ գաւառներում, սակայն գգրարթաղիքագործների կամ տեղի բարբառով կատանցի մեծ մասը կազմում էին Մոկսի Արնանց, Լիւլենց, Սիպկանց գիւղերի եւ յատկապէս Վոզիմ մեծ աւանի տղամարդիկ: Վերջիններս իւրաքանչիւր աշնանը, սովորաբար սեպտեմբեր ամսին, մեծ խմբերով տարածւում էին պատմական Հայաստանի բոլոր հայաբնակ բնակավայրերում եւ տուն վերադառնում գարնան կամ ամռան վերջին՝ գիւղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար:²⁰

Վասպուրականի տնայնագործութեան ու արհեստների մասին խօսելիս պէտք է նկատի ունենալ, որ դրանց տարածման ու զարգացմանը մեծապէս նպաստում էր նահանգի կենտրոն Վանը, որի առեւտրականներն արտահանում էին ոչ միայն քա-

18 Տե՛ս Ե. Լալաեան, *Տնայնագործությունը Վասպուրականում*, էջ 189-190:

19 И.А. Орбели, *Фольклор и быт Мокса*, ст. 37-38.

20 Նոյն տեղում, էջ 39:

ղաքի, այլեւ ողջ Վասպուրականի արհեստավորական արտադրանքը: Այդ մասին վկայում է «Բիւրակն» պարբերականի հետեւեալ նիւթը. «Քաղաքէն կ'արտածուին շալ, չիթ, կտաւ, շիլայ, բորակ, ... պտուղներ, այլ առարկաներ, գործիքներ եւ պիտոյքներ: Վանայ մէջ արհեստներն ալ բաւականին ծաղկած են, որոցմէ չորս ամենաբանուկ եւ գլխաւորներն են՝ ոսկերչութիւն, կահագործութիւն, որ մինչ Պոլիս եւ Եւրոպա կրնայ հասցնել իր շինուածները դերձակութիւն (մօտայի հետ միշտ փոփոխման ենթակայ) եւ կօշկակարութիւն. կան նաեւ դարբնութիւն, երկաթագործութիւն, պղնձագործութիւն, հիւսնութիւն, ոստայնանկութիւն, որմնադրութիւն, նաեւ կան ժողովրդի պիտոյքները լրացնող շատ երկրորդական արհեստներ ալ. ինչպէս փորագրութիւն, ներկարարութիւն, խաղախորդութիւն, թիթեղագործութիւն, թամբագործութիւն, մուճակագործութիւն են: [...] Վանեցի կիները կը պարապին ասեղնագործութիւն, կարի եւ զանազան ձեռագործելու, որոնք հազիւ տնական պէտքեր կրնան հոգալ»:²¹

Վանը հնագոյն ժամանակներից արհեստավորական ու առեւտրական նշանաւոր կենտրոն է եղել, ուստի նշուած արհեստների ցանկը չի ներկայացնում քաղաքի տնտեսական զբաղ մունքների իրական վիճակը: Այդ բացը լրացնելու համար դիմել ենք տարբեր աղբիւրների, որոնցից ստացուած կցկտուր տեղեկութիւնները համադրելով փորձել ենք որոշ չափով ամբողջական ներկայացնել Վանում տարածուած արհեստներն ու զբաղմունքները:

Այս հարցում մեծապէս օգնել է Հր. Աճառեանի «Թուրքերենից փոխառեալ բառեր հայերէնի մէջ» բառարանը,²² որի հի-

ման վրայ կազմուած արհեստների ու զբաղմունքների աղիւսակը տրւում է ստորեւ:

Արհեստներ		
1	Այնաճի	հայելի ծախող կամ շինող
2	Աշէի	խոհարար
3	Ասքըջի	հնակարկատ
4	Աքմաքջի	հացագործ, հացավաճառ
5	Բարիւթջի	վառօղ շինող կամ ծախող
6	Բընէ	որմնադիր
7	Դամիրջի	երկաթագործ
8	Դըբաղ	կաշեգործ
9	Դոնդուրմաշի	պաղպաղակ շինող կամ ծախող
10	Թանիքեաշի	թիթեղագործ
11	Թարզի	դերձակ
12	Թայհնաշի	տաշտ շինող կամ նորոգող, ծախող
13	Թէօհմաշի	ձուլարար
14	Թվանքջի	հրացանագործ
15	Թուռըջի	թթու շինող կամ ծախող
16	Լափչիմջի	կիսակօշիկ ծախող կամ շինող
17	Խալիճի	գորգ շինող կամ ծախող
18	Կադայիֆճի	խմորեղեն շինող և ծախող
19	Կազանչի - պղնձագործ	կաթսա շինող կամ ծախող
20	Կալամքեար	փորագրիչ, 2. Տպածո չիթ
21	Կալդըրմաշի	սալայատակ շինող
22	Կալփաղջի	կալփաղ կոշտող բրդոտ գլխարկ շինող կամ ծախող
23	Կասաք	մսագործ, մսավաճառ
24	Կաֆասչի	վանդակ շինող կամ ծախող
25	Կըլըշչի	թուր շինող կամ ծախող
26	Կլալեկչի	անագագործ
27	Կուլումչի	ոսկերիչ
28	Կումդուռաշի	կօշկակար, կօշկավաճառ
29	Հալաճ	բուրդ գզող
30	Հալվաշի	հրուշակագործ, հրուշակավաճառ
31	Մառանկոզ	ստաղձագործ
32	Մասկալաշի	հղկող արհեստաւոր
33	Մադանչի	հանքահամ, հանքագործ
34	Մաքինաշի	մեքենայով կար կարող գործաւոր
35	Մինաշի	էմալով նկարող արհեստաւոր
36	Մեղլաշի	ծեփագործ
37	Յաղդուզչի	ոսկի կամ արծաթ դրուագներով զարդարող

21 Տե՛ս «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, թիւ 38-39, էջ 610:

22 Հր. Աճառեան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ (Էմիւնեան ազգագրական ժողովածու, հ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902):

38	Նախաշ	Ակարիչ, զարդանկարիչ
39	Նալբանդ	պալատար
40	Նաջար	հիւան
41	Շուշաշի	սպակէ շիշ շիմող կամ ծախող
42	Չախուհի	զմելի (գրչափատ) շիմող կամ ծախող
43	Չադրըշի	վրան շիմող կամ ծախող
44	Չլընգիր, չը-լընգեսար	փականագործ
45	Պալթաճի (պալթակա-ցիմ)	փայտափատ,
46	Պոյաճի	ներկարար
47	Զամճի	սպակեգործ, սպակեվաճառ
48	Զզմաշի	սոնակօշիկ, մոյկ շիմող կամ ծախող
49	Սահաթշի	ծամագործ
50	Սապոնցի	օճառ շիմող կամ ծախող
51	Սամարշի	համեմագործ
52	Սըրմաքեշ	ոսկեթել շիմող
53	Սոբաշի	երկաթեայ վառարան շիմող արհեստաւոր
54	Սոլկար	մաշկակար, կօշկակար
55	Սուլուխշի	երշիկ շիմող կամ ծախող
56	Փախըրշի	պղնձագործ
57	Փափուշի	հողաթափ շիմող կամ ծախող
58	Փաքլաւաշի	փախլաւա շիմող կամ ծախող
59	Փոնցի	փոսպան
60	Փուչախշի	դանակ շիմող կամ ծախող
61	Քեառասատա-շի	ածխավաճառ, ածխագործ
62	Քրեշշի	երաժշտական գործիքների հա-մար աղիքից լար պատրաս-տող
63	Քիւրքշի	մուշտակագործ, վաճառող
64	Օյմաշի	փորագրիչ
65	Ֆանարշի	լապտեր շիմող կամ ծախող
66	Ֆըչիճի	տակառ շիմող կամ ծախող

Հասկանալի է, որ սա Վանի արհեստ-ների ու զբաղմունքների վերջնական ցու-ցակը չէ, քանի որ այստեղ ընդգրկուած են միայն թուրքերէն անուն ունեցող արհեստ-ները, ուստի եւ լրացման կարիք ունի: Վա-նի արհեստների ընդհանուր պատկերը ստանալու համար դրանք ներկայացնում ենք ըստ նիւթի կամ «մայր» ճիւղերի:

Երկաթագործական արհեստները Վաս-պուրականում զարգացած էին հնագոյն

ժամանակներից: Թէ՛ դիւղում եւ թէ՛ քա-ղաքում յոյժ կենսական նշանակութիւն ու-նէր դարբնութիւնը, ուստի պատահական չէ, որ դրա տակ լայն իմաստով հասկա-ցւում էր մետաղագործական արհեստների զգալի մասը, իսկ վարպետը կոչւում էր «դարբին երկաթոյ եւ պղնձոյ»: Ըստ Բ. Առաքելեանի, զարգացած միջնադարում արտադրական յարաբերութիւնների, ար-տադրողական ուժերի զարգացման, քա-ղաքների դերի բարձրացման եւ պահան-ջարկի մեծացման հետ «մայր արհեստները, այդ թւում նաեւ դարբնութիւնը, տրոհւում են եւ մի շարք երկաթագործական արհեստ-ներ դառնում են ինքնուրոյն»:²³

Դարբնութիւնն անջատուելով իր մէջ ընդգրկեց միայն երկաթի (աւելի ճիշտ՝ սեւ մետաղների) մշակման բնագաւառը, դառնալով ընդհանուր եւ բազմաբնոյթ արհեստ, որի ներսում աշխատանքի յետա-գայ բաժանումն անխուսափելի էր: Այս գործընթացն առաւել ցայտուն արտայայ-տուեց զարգացած արհեստագործական աւանդոյթներ ունեցող քաղաքներում՝ մասնաւորապէս Վանում:

Աղիւսակում ընդգրկուած են դար-բնութիւնից ածանցուած մասնագիտա-ցուած արհեստները (դամիրջի, թանի-քեաշի, թէօհմաշի, կաֆասջի, նալբանդ, չլընգիր, սոբաշի, փուչախշի), որոնց մի մասն անջատուել էր դեռ միջնադարում, իսկ միւսներն առաջացել էին աւելի ուշ: Միջնադարից եկող երկաթագործական ար-հեստներն են փականագործութիւնը (չը-լընգիր),²⁴ որի անջատումն ու զարգացու-մը կապուած էր քաղաքային կեանքի զարգացման, դրամաշրջանառութեան ընդլայնման, գանձ, մեծագին ապրանքներ պահելու անհրաժեշտութեան հետ եւ պայ-

23 Բ. Առաքելեան, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX-XIV դդ., հտ. 1, Երեւան, 1958:

24 Տե՛ս Վ. Վարդանեան, Արհեստագործութեան զարգացումը Վասպուրականում, էջ 39:

տարութիւնը (նալբանդ)՝ պայմանաւորուած բարձկան եւ քաշող անասուններին պայտելու անհրաժեշտութեամբ:

Երկաթագործութիւնից անջատուած արհեստների խումբ է կազմում զինագործութիւնը, որն աւելի վաղ անջատուեց դարբնութիւնից, քան միւսները, ժամանակի ընթացքում ձեռք բերեց առանձնաշատուկ ձեռագիր եւ միջնադարում բաժանուեց են թաճիկերի: Այն ի սկզբանէ արհեստավարժ, այսպէս կոչուած «քաղաքային» իւրաքանչիւր բնոյթի արհեստ էր: Վանի զինագործութիւնը, ըստ աղիւսակի, ներկայացնում են երեք տարբեր մասնագիտացումներ. Բարիւթջին վառօդ պատրաստող էր, թուանքջին (հրացանագործ) հրազէնի, իսկ կըլըչէին սառը գէնքի վարպետն էր: Եթէ նկատի ունենաք, որ հրացանի պատրաստումը յարակից մի քանի այլ արհեստների միջոցով էր իրականացւում,²⁵ ապա պարզ է դառնում, որ այդ արհեստների անունները բացակայում են աղիւսակում: Վանի զինագործների բարձր որակաւորման մասին պահպանուել է հետեւեալ հետաքրքիր վկայութիւնը. «քաղաքում 80-ական թթ. ուստա Փանոսի ջանքերով եւ հնարամտութեամբ հնարաւոր եղաւ Բերդան հրացան արտադրել եւ վարպետը «իր գաղտնի արհեստանոցին մէջ կը նորոգէր փամփշտաւոր հրացաններ եւ կը շինէր Պերտան եւ Սուբմալի հրացաններ...»:

Ինքնապաշտպանութեան բնազդը վարպետին մղել էր արհեստանոցային պայմաններում նոյնիսկ ամերիկեան Մարտին տիպի հրացան պատրաստել:²⁶

Վասպուրականում հնագոյն ժամանակներից զարգացած ու տարածուած մե-

տաղամշակութեան միւս ճիւղը պղնձագործութիւնն էր, որը եւս կարեւոր դեր ունէր երկրի տնտեսական կեանքում, քանի որ բաւարարում էր բնակչութեան առօրէական պահանջները: Միջնադարում պղինձը երկաթի ու կապարի հետ օգտագործուել է նաեւ շինարարութեան մէջ:²⁷ Վանի պղնձագործութիւնն աղիւսակում ներկայացուած է երեք մասնագիտացումներով (կազանչի, կլայեկչի, փախըրջի), որոնցից երկուսն էին կոնկրետ իրեր պատրաստում: Պղնձեայ իրերը քաղաքային կենցաղի ամենալայն կիրառութիւն ունեցող իրերն էին՝ տարբեր տեսակի ու մեծութեան կաթսաները, տաշտերը, ջրամանները, թասերը, ափսէները եւ այլն: Պղնձագործները պատրաստում էին նաեւ կանացի զարդեր ու եկեղեցական սպասք՝ բուրվառ, սկիհ, մոմակալ, ծնծղայ, ջահեր, խաչեր, քոյցներ եւ այլն:

Պղնձագործութեան հետ կապուած եւ նրան յարակից արհեստ էր անագագործութիւնը կամ անագապատումը, որը բնակչութեան մէջ յայտնի էր կլայեկչութիւն անուամբ: Քանի որ մաքուր պղինձը օքսիդանալու յատկութիւն ունէր, ուստի դա կանխելու եւ սպասքի «կեանքը երկարացնելու» համար, օգտագործելու ընթացքում անպայման կլայեկում էր, այսինքն պատուում էր անագի բարակ շերտով, որը մաշուելու դէպքում կարող էր նորից թարմացուել: Կլայեկչիները հիմնականում շրջիկ արհեստաւորներ էին եւ անցնելով թաղէ թաղ ու գիւղէ գիւղ՝ անագապատում էին պղնձեայ իրերը:

Մետաղի հետ կապուած արհեստներից Վանում յատկապէս զարգացած էին ոսկերչութիւնն ու արծաթագործութիւնը: Բերուած աղիւսակում ոսկերչութիւնը ներկայացուած է չորս նեղ մասնագիտացումներով (կուլումջի, մինաջի, եալդուզ-

25 Տե՛ս Գ. Աղանեան, Հայկական զինագործութիւնը XIX դարում - XX դարի սկզբին, - Ծիրակի հալագիտ. հետազօտ. կենտրոն, Գիտական աշխատութիւններ, հ. III, Գիւմրի, 2000, էջ 129-136:

26 Հ. Պողոսեան, Վասպուրականի պատմութիւնից, էջ 203:

27 Վ. Վարդանեան, Արհեստագործութեան զարգացումը Վասպուրականում, էջ 39-40:

ջի, օյմաջի), ինչն, անշուշտ, ցոյց է տալիս արհեստի տարածման ու կիրառման իրական պատկերը: Պէտք է նշել, որ այն բարձր կատարելագործման հասած այն հինաւորաց ու մեծայարգ արհեստներից էր, որի հետ, աւանդական վաղեմութեամբ ու բարդութեամբ, թերեւս ոչ մի արհեստ չէր կարող մրցել:

Ոսկէ եւ արծաթէ գործերը Վանում, բոլոր միւս արհեստներին գերազանցելով, հասել էին կատարեալ մակարդակի, դարձել անթերի արուեստ՝ առանձնայատուկ տեղ գրաւելով հայկական արուեստի պատմութեան մէջ: ԺԹ. դարի երկրորդ կէսին Վանում կային 120 ոսկերչական եւ արծաթագործական խանութարհեստանոցներ, ուր ստեղծուում էին զանազան ծխամորճներ, տուփեր, գաւաթներ, հերակալներ, խոհանոցային իրեր, մատնոցներ, թէյի մաղեր, գօտիներ, գրասեղանի իրեր, գրիչներ, գրասենեակային պիտոյքներ, թասեր, ջրամաններ, եկեղեցական արարողութիւնների ընթացքում օգտագործուող տարբեր իրեր եւ զարդեր, որոնք գերազանց վարպետութեան աշխատանքներ էին ողջ աշխարհի չափանիշով: Ամէն տարի Վանում պատրաստուող հազար ու մի տեսակի արծաթէ իրերը վաճառուում էին Ստամբուլում, Եւրոպայում, Ափրիկէում, Ամնում եւ աշխարհի չորս ծայրերում:

Ատրպետի վկայութեամբ «Վանի ոսկերիչ քանդակագործները չբաւականանալով աւանդական քանդակագործի կալամներով, նրանք լուսանկարիչներից սովորական արծաթէ տուփերի վրայ լուսանկարում, փորագրում, արծնում, սեւադում էին բնանկարներ եւ զանազան սիւժետային պատկերներ»: Այդ մասին յիշատակում է նաեւ Վանի նշանաւոր արհեստաւորների մասին պատմող յօդուածում. «այս կարգին չեմ վարանիր յիշել նաեւ տեղւոյս փորագրութեան արուեստն, որ եթէ եղած չըլլայ,

հարկաւ ոսկերչութիւնը պիտի չունենար իր արդի փայլն ու համբաւը»:²⁸

Արծաթեայ նրբագեղ աշխատանքների մէջ աչքի են ընկնում սեւադապատ նշանի մատանու տուփերը, որոնք գործածական էին միայն Վանում: Համաձայն հինաւորաց աւանդոյթի, նշանդէքի մատանին դրում էր արծաթէ տուփի մէջ եւ փաթաթում մետաքսէ թաշկինակով: Ընտանիքի քահանան, դա փեսայի ձեռքից վերցնելով, տանում էր տուեալ շրջանի հոգեւորականների առաջնորդ եպիսկոպոսին: Վերջինս, մատանին օրհնելով, այն տալիս էր ապագայ հարսի ընտանեկան քահանային, որն էլ տուփը տանում ու յանձնում էր աղջկայ ընտանիքին:²⁹

Վանի արհեստավարժ ու նշանաւոր բազմաթիւ վարպետներից ցանկանում ենք յիշել Գեւորգ Գուլումջիբաշեանին, որի մասին պատմող յօդուածից բերում ենք մի հատուած. «Այս դեռատի արհեստաւոր հնարած է արծաթեայ սնամէջ երկրագունտ մը չորս կամ հինգ նարնջի մեծութեամբ, հաստատուած արծաթէ շատ սիրուն եւ նրբակերտ եռոտանի պատուանդանի մը վրայ իր ծիրի հակեալ դրութեամբ: Ասոր վրայ «Սաւադ»ի սկզբունքով փորագրուած են նաեւ երկրի բնական բաժանումներ, գոտիներ, աստիճաններ եւ այլն, թուրքերէն կամ Հայերէն գրուած անուններով: Բայց ամենն այս չէ, այլ երկրագունտի փորին մէջ վարպետութեամբ գետեղուած են ժամացոյցի բոլոր պարագաները, որոնց միջոցաւ այն գունտն իր առանցքին վրայ կը դառնայ ինքնին 24 ժամու շրջանով, որով այլ եւ այլ երկիրներում մէջ մի եւ նոյն ատեն եղած ցորեկն ու գիշերը կրնան հասկացուիլ: Գունտի հարաւային բեռին վրայ հաստատուած է

28 Ատրպետ, Ինչ ժառանգեցինք,- Հայաստանի Պատմ. Թանգարանի արխիւ, գործ 146(ա), էջ 65:

29 Ե. Լալաեան, Վասպուրականի ազգագրութիւնը,- Ազգագր. Հանդէս, XX, Թիֆլիս, 1900, էջ 147:

խոշոր կողմնացույց մը, իսկ հիւսիսայինին վրայ զետեղուած է արծաթէ թռչնիկ մը և անոր բոլորտիք՝ 1-12 թուանշանները, ուստի գունտին մեղմօրէն դարձած ատեն այն թրուշուկն իր կտուցին ուղղութեամբ ժամը քանի ըլլալը կը ցուցանէ ճշտօրէն: Ահա այս արծաթեայ երկրագունտն թէ՛ իբրեւ սեղանի մեկ հատիկ զարդ՝ և թէ՛ միանգամայն իբրեւ ժամացույց ու գիտական հրահանգիչ գործիք, զնահատուելով տեղւոյս այլ և այլ պաշտօնական մարմիններէն և հարուստ դասակարգէն, շատ անգամ կը գնուի իրենցմէ 15-20 լիրայի և ուրիշ քաղաքներ կը ղրկուի իբրեւ յարմար նուէր»:³⁰

Վանում տարածուած ու զարգացած արհեստների միւս խումբը շինարարութեան հետ կապուած արհեստներն են, որոնք ներկայացնող անունները (բլնէ, կալզըրըմաշի, մեռլաշի) եւս ամբողջական չեն: Առաջին հերթին, կարծում ենք, պէտք է աւելացուեն քարտաշութիւնն ու աղիւսագործութիւնը, քանի որ քաղաքի տները կառուցուած էին հում աղիւսից, իսկ հիմնապատերը՝ քարերից (որպէսզի խոնաւութիւն չանցնի), ապա քանդակագործութիւնն ու որմնանկարչութիւնը (ճիտաշի), որի վարպետները յայտնի էին ողջ Վասպուրականում:

Շինարարական արհեստները մեծապէս օգտուած էին կաւագործութեան արտադրանքից: Ինչպէս նշուեց, Վանի տները կիսով աղիւսաշէն էին, իսկ դրանք պատրաստուած էին մասնաւոր վարպետների կողմից: Աղիւսների պատրաստման մանրամասն նկարագրութիւնը տուել է Ե. Լալայեանը:³¹ Բացի դրանից շինարարական աշխատանքների ժամանակ լայնօրէն գործածուած էին ծածկի կղմինդրներ, շէնքերը ներսից ու դրսից զարդարելու շքաղիւս, տերակոտային աղիւսիկներ, ինչպէս նաեւ

քաղաքին ջուր մատակարարող ջրմուղների կաւէ փողրակաւոր խողովակներ:

Ինչ վերաբերում է ջրմուղագործութեանը, ապա դա եւս Վասպուրականում բաւականին բարձր մակարդակի էր հասել, ինչի մասին վկայում է Ե. Լալայեանը. «Շատ տների այգիներում կամ բակերում լինում են ջրհորներ, նաեւ աղբիւրներ, որ հանում են քանքան խբելով: Այս արհեստը Վանում շատ յառաջացած է, եւ ըստ երեւոյթին շատ հին, նոյնիսկ խալդական է, որովհետեւ կան չափազանց հին քանքաններ»:³²

Շինարարութեան հետ կապուած՝ կաւից պատրաստուող ոչ միայն այս, այլեւ բազում այլ իրերի պատրաստման արհեստներն, ինչպէս տեսնում ենք, ցուցակում իսպառ բացակայում են այն դէպքում, երբ մատենագրական աղբիւրների վկայութեամբ խեցեգործութիւնը եւս հին ժամանակներից զարգացած էր Վան-Վասպուրականում:

Սբ. Գրիգոր Նարեկացին յիշում է խեցեգործի ճախարակը, գրելով, «ճախարակեայ անօթք ամենեւին զտեալ եւ մաքրեալ են ի զազրութենէ եւ ի տգեղութենէ»: Վանայ լճի շրջակայքի խեցեգործների արտադրանքն իր բարձր որակի շնորհիւ հռչակուած էր նաեւ ուրիշ երկրներում: Արաբ մատենագիր Իգրիսին վկայում է, որ Վանայ լճի մերձակայքում եղած «կաւի տեսակից պատրաստուած են ջրի շքեղ ամաններ, որ արտահանում են Իրաք, Ասորիք, Եգիպտոս: Այն վաճառում է թանկ գներով»:³³

Բնական է, որ բրուտները շարունակել են իրենց զբաղմունքը նաեւ յետագայում՝ տեղական կաւից պատրաստելով բազմաթիւ կենցաղային իրեր: Պէտք է

30 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, № 1100:

31 Ե. Լալայեան, Վասպուրականի ազգագրութիւնը, էջ 122:

32 Ե. Լալայեան, Վասպուրականի ազգագրութիւնը, էջ 127:

33 Տե՛ս Վ. Վարդանեան, Արհեստագործութեան զարգացումը Վասպուրականում, էջ 44:

նշել, որ ուրիշ ոչ մի նիւթից պատրաստուած ամանեղէնը եւ իրեղէնը այնպիսի լայն կիրառութիւն չունէին գիւղի ու քաղաքի բնակչութեան կենցաղում, ինչպէս կաւէ ամանեղէնը: Եւ դա հասկանալի է, քանի որ ոչ մի նիւթ այնքան մատչելի ու հեշտ մշակելի չէ, որքան կաւը:

Վանում զարգացած էր նաեւ հիւսնատաղձագործութիւնը, որը ինչպէս եւ դարբնութիւնը, հնագոյն եւ յոյժ կարեւոր արհեստներից էր: Փայտի մշակման հետ կապուած արհեստներից աղիւսակում ներկայացուած են վեցը (մառանկոզ, մասկալաջի, ֆըչիճի, նաջար, պալթաճի, քեառաստաջի): Թէ որքանով էին պահանջուած փայտէ իրերը վանեցիների կեանքում, նկարագրուած է «Արեւելեան մամուլ»-ում. դրանք ե՛ւ տան կառուցման մէջ գործածուող մասեր են (պատուհաններ, դռներ, պատշգամբներ, առաստաղ) ե՛ւ կահոյք ե՛ւ կենցաղային առարկաներ, որոնք նաեւ գեղարուեստորէն փորագրւում յարդարւում էին:³⁴ Բնական է, որ առանձնացուել էին այդ իրերը պատրաստող վարպետները՝ կազմելով մասնագիտացուած արհեստներ:

Փայտամշակութեան հետ էին կապուած նաեւ սայլագործութիւնը, կառագործութիւնը, նաւաշինութիւնը, որոնք դեռ միջնադարում էին անջատուել ու զարգացել որպէս ինքնուրոյն ճիւղ, սակայն բացակայում են աղիւսակում:

Փայտամշակութեան բոլոր յիշեալ արհեստներից, սակայն, քաղաքում յատկապէս զարգացած էր կահոյքագործութիւնը, ինչի մասին կարդում ենք. «...կան տակաւին ուրիշ արհեստներ, որ օր աւուր աւելի զարգանալու վրայ են իրենց կարգ մը բնածին հանճարով օժտուած վարպետներու շնորհիւ, մանաւանդ կահագործու-

թիւն (մառանկոզ), որ ամերիկեան հին միսիոնարներէն մեկը մտցուց հոս իբր 25 տարի առաջ, թէեւ այժմ աւելի զարգացած, մասնաւորապէս ընկոյզի փայտերէ և ցիցերէ (քիւթիւկ) քաշուած տախտակներով շինուած և այլեւայլ առարկաներ, որ կրնան մրցիլ բուն իսկ եւրոպականներուն հետ՝ իրենց փայլաներկի (ճիւլա) փողփողիւններով ու զարդագիծերով»:³⁵

Վասպուրականի արհեստաւորները հմուտ էին նաեւ զանազան տեսակի գործուածքեղէն արտադրելու բնագաւառում, որոնց միաւորել ենք առանձին խմբում (խալիճի, նախաշ, չադըրջի, պոյաճի, սըրմաքեշ, կալամքեար, հալաճ): Այս ցանկը եւս լրացման կարիք ունի, քանի որ գործուածքի հետ կապուած շատ արհեստներ չեն յիշատակուած. մասնաւորապէս ջուլհակութիւնը կամ շալագործութիւնը, որի արտադրանքը դուրս էր բերւում արտաքին շուկայ: Գործելու հետ կապուած արհեստներն ու զբաղմունքները բազմաթիւ են, քանի որ ընդգրկում են հումքի մշակման, թելի պատրաստման ու այդ թելով տարբեր առարկաներ ստանալու գործընթացները:³⁶ Վանում դրանք ներկայացուած են ե՛ւ տնայնագործութեան ե՛ւ ահեստի ձեւով: Որպէս օրինակ կարելի է բերել բըրդի կամ բամբակի մշակումը, որը տան պայմաններում գտնւում էին կանայք, իսկ տանից դուրս՝ տղամարդիկ, որոնք յայտնի էին հալաճ անունով: Նոյնը կարելի է ասել նաեւ մանելու վերաբերեալ. թելը տնայնագործական եղանակով ստանում էին կանայք՝ գերազանցապէս իլիկի ու ճախարակի միջոցով բուրդն ու բամբակը մանելով, իսկ յատուկ արհեստանոցներում դրանով զբաղւում էին տղամարդ վարպետները: Այդպիսի վար-

34 Փէտի աշխարհ,- «Արեւելեան մամուլ», 1897, № 22, էջ 737:

35 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, № 1101:

36 Այս մասին մանրամասն տե՛ս Կ. Բագէեան, Գործուածքն ու դրա հետ կապուած արհեստները հայոց մէջ (XIX-XX դդ.), - Ասանդակաւնը եւ արդիականը հայոց մշակոյթում (Հայ ժողովրդական մշակոյթը XV), Երեւան, 2010, էջ 404-413:

պետներից յայտնի է Միքայել Առեղցեանը, որը ստեղծել էր մանելու աշխատանքները թեթեւացնող մեքենայ: Այդ նպատակին հասնելու համար նա նոյնիսկ «պարտքի տակ ալ ինկաւ, սակայն կարողացաւ ստեղծել 20 իլիկներով աշխատող մի մեքենայ: Վարպետը շուտով բացեց մի փոքրիկ գործարան, որտեղ աշխատում էր 3-4 մեքենայ: Կ. Պոլսի հետ համեմատած նրա թելերը «քաշ գլուխ՝ հինգ դահեկան ածան եւ դիմացկուն էր»:³⁷

Վանեցիների աւանդական կենցաղում գործուածքի տարբեր տեսակների լայն գործածութեան մասին կարելոր տեղեկութիւն է տուել Ե. Լալաեանը. «Մի կէս դար առաջ տան կահաւորութիւնը միայն փռուածք է եղել, այսինքն՝ բարձ, ներքնակ, գորգ, փսիաթ, ընդհանրապէս փռուող բաներ, փայտէ կարասիք չեն եղել... Փռուածքը հետեւեալ կերպով է լինում. յատակին, որ ծածկուած չէ լինում տախտակով, քցում են խըսիր. սրա վրայ փսիաթ կամ գորգ, պատերին կից փռում են ներքնակներ, որոնք կամ այնպէս բաց են մնում և կամ մի ուրիշ, նեղ և երկար գորգով ծածկուում. ներքնակների կողքից, պատերին յենած շարում են երկար թիկնաբարձեր, որոնք յաճախ խոտով են լցուած լինում: Բարձերի վրայ էլ մի երկար, սպիտակ կտոր են քաշում, որ ծածկում է միայն կէսը: Այս ներքնակների վրայ են նստում ծալապատիկ կամ չոքած»:³⁸

Բոլոր յիշատակուած իրերը պատրաստուում էին ինչպէս տանը, այնպէս էլ յատուկ արհեստաւորների կողմից: Խսիրագործութիւնը, գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը հիմնականում տնայնագործական զբաղմունքներ էին, չնայած շատերը դրանք նաեւ վաճառքի էին հանում կամ գործում էին պատուէրով: Այդ

մասին վկայութիւններ են պահպանուել բազմաթիւ աղբիւրներում, մասնաւորապէս Հ. Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարանում», ուր նշուած է, որ տեղի հայ կանայք հռչակուած էին գունագեղ գորգեր գործելու իրենց վարպետութեամբ:³⁹

Իրենց գեղարուեստական բարձր արժէքով յայտնի էին Վանի ասեղնագործութիւնն ու ժանեակը, որով զբաղւում էին միայն կանայք եւ որն ունէր տնայնագործական բնոյթ: Ընտիր կարատեսակի եւ գեղարուեստական առանձնայատկութիւնների շնորհիւ հայկական ասեղնագործութեան ու ժանեակագործութեան մէջ առանձնացուել է Վանի դպրոցը, իսկ «Վանի կար»-ը դուրս է եկել բնօրրանից ու տարածուել մինչեւ Կ. Պոլիս ու Ղրիմ:⁴⁰

Քաղաքում զարգացած էին նաեւ դաշագործութիւնը (հիմնականում կարմիրով) եւ ծաղկազարդումը. առաջինը կատարւում էր յատուկ փայտեայ փորագրուած դաշերով (տրաֆարետներով), որոնք մտցւում էին տարբեր գոյների ներկերի մէջ ու տպւում կտորի վրայ, իսկ միւսը կատարւում էր վրձիններով՝ նուրբ ու մանր ծաղկանախշեր նկարելով գործուածքի վրայ:

Գործուածքի հետ կապուած միւս արհեստը, որ տարածուած էր Վանում, վրանագործութիւնն էր (չազըրջի): Ըստ Ատրպետի ձեռագիր նիւթերի «Վանի ծովի եզերքում նաւավարների համար վրանագործները պատրաստում էին առաքաստներ սպիտակ կտաւից՝ կրկնակի կտաւով: Բացի այդ, նրանք վրաններ էին պատրաստում ինչպէս մասնաւոր անձանց՝ չոբանների, քրդերի, բեկերի, ցեղապետների,

39 Տե՛ս Հ. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Բ. Ա., Վենետիկ, 1903, էջ 98:

40 Այս մասին մանրամասն տե՛ս. Ս. Դաւթեան, Հայկական ժանեակ: Աղմի՝ Հայկական ասեղնագործութիւն: Կ. Բազէեան, Վասպուրականի ասեղնագործութեան առանձնայատկութիւններ: Ս. Գալֆայեան, Վանի դպրոցի ասեղնագործ ժանեակները:

37 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, № 1100:

38 Տե՛ս Ե. Լալաեան, Վասպուրականի ազգագրութիւնը, էջ 127:

այնպէս էլ՝ պետական, այսինքն զինուորականների համար»։ Ատրպետը մանրամասն նկարագրում է յատկապէս զինուորական վրանները, որոնք լինում էին պարզ եւ բարդ, զարդարուն եւ հասարակ՝ նայած պատուիրատուի կարողութեան։⁴¹

Դերձակութիւնն այն արհեստն է, որն ուղղակի կապ ունի գործուածքի տարբեր տեսակների հետ, սակայն մենք դա ընդգրկել ենք հագուստի հետ կապուած արհեստների ցանկում (ասքըջի, թարզի, լափ-չինջի, կալփաղջի, կունդուռաջի, մաքինաջի, ջգմաջի, սօլկար, քիւրքջի), որը եւս լրացման կարիք ունի։ Այս դէպքում առաջնորդուել ենք ոչ թէ պատրաստուող իրի նիւթով, այլ կիրարկման ոլորտով՝ հիմք ընդունելով այն, որ դրանք ի սկզբանէ մեկ արհեստ են եղել։ Այդ մասին Հայկազեան բառարանում կարդում ենք. «Դերձակարուեստաւոր, որ գիտէ կարել դերձանօք զհանդերձս, եւս և զմորթս. հանդերձակար, կօշկակար»։⁴²

Ինչպէս վերը նշուեց, «Բիւրակն» հանդէսի հաւաստմամբ, դերձակութիւնն ու կօշկակարութիւնը Վանում շատ զարգացած չորս արհեստներից էին։ Ընդ որում դերձակներն այստեղ, ինչպէս եւ հայկական ու հայաբնակ այլ խոշոր քաղաքներում, տարբերում էին ըստ կարող հագուստի ոճի՝ եւրոպական, ասիական (թարզի) եւ զինուորական։⁴³ Ըստ «Բիւզանդիոն»-ի նշուած յօդուածի եւս, քաղաքում յարգի արհեստների թւում են. «... դերձակութիւն և կօշկակարութիւն (երկուքն ալ եւրոպական), որոց արտադրած գործերը դարձեալ կրնան մրցիլ եւրոպականներուն հետ։» Նոյն հեղինակի

հաւաստմամբ դերձակները մասնագիտացուած էին նաեւ տղամարդու և կնոջ հագուստի պատրաստման մէջ. «Առաջնոյն մէջ մասնաւորապէս աչքի կը զարնեն Յակոբ աղա Քիշմիշեան, արական (մերտանէ) տարազին, իսկ Պ. Եղիազար Պօղոսեան իգականին (գենտնէ) մէջ ըստ եւրոպական վերջին նորաձեւութեան։ Ուստի զինուորական և ուրիշ պաշտօնական մարմիններ, ինչպէս նաեւ հարուստ դասակարգը շատ կը գնահատեն յիշեալ երկու վարպետներուն գործերը»։⁴⁴

Յաջորդ խումբ արհեստները, որ առանձնացրել ենք կաշեգործական (դրբաղ, սամարջի, քրեշջի), ապակեգործական (շուշաջի, ջամճի, այնաճի) եւ սննդի պատրաստման հետ կապուած (աքմաքջի, դոնդուրմաջի, թուռշըջի, կադայիֆճի, կասաբ, հալուաջի, սոլշուխջի, փաքլաւաջի, փոնջի) արհեստներն են, որոնց վրայ կանգ չենք առնում նիւթի սակաւութեան պատճառով։

Ինչպէս երեւում է աղիւսակից, Վանի տնտեսական կեանքում, արհեստագործութիւնից բացի, կարեւոր դեր ունէին նաեւ այլ զբաղմունքներն ու մասնաւորապէս առեւտուրը։ Ի տարբերութիւն Կարինի, Վանի եւ ամբողջ վիլայեթի առեւտուրը հայերի ձեռքում էր։ Նրանք վաճառում էին գերազանցապէս տեղական արտադրանքը՝ ինչպէս գիւղատնտեսական մթերքներ, այնպէս էլ արհեստագործական իրեր։ Վանեցիները կապ ունէին Կ. Պոլսի, Այնթապի, Դիարբեքիւրի, Մոսուլի, Պարսկաստանի, Մոսկուայի հետ։ Նրանք ոչ միայն արտահանում, այլեւ ներմուծում էին գորգեր, բամբակ, չիթ, քիշմիւրի շալեր, մանրավաճառ ապրանքներ։⁴⁵

Պէտք է նկատի ունենալ, որ աղիւսակում ներկայացուած նեղ մասնագիտացուած առեւտրով զբաղողներին թիւն

41 Ատրպետ, *Ինչ ժառանգեցինք*, էջ 32։

42 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 1, Երևան, 1979, էջ 611։

43 Կ. Բազեան, *Դերձակությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում*,- Ծիրակի հայագիտ. հետազոտ. կենտրոն, Գիտական աշխատություններ, հ. XII, Գիւմրի, 2009, էջ 86-92։

44 Տե՛ս «Բիւզանդիոն», 1900, № 1101։

45 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. V, Երևան, 1974, էջ 307։

իրականում աւելի մեծ է, քանի որ վաճառականներից ու առեւտրականներից բացի, իրենց արտադրանքի վաճառքով զբաղւում էին նաեւ արհեստավորները: Դա արտայայտուած է արհեստների անունների բացատրութեան մէջ, ուր մեծ մասով նշուած է նախ պատրաստի առարկայի կամ իրի անունը, ապա արհեստավորի անունը՝ դրա շինող կամ ծախող ձեւով: Սա հաստատում է այն փաստը, որ աւանդական քաղաքային կենցաղում արհեստավորներն աշխատում էին առանձին կրպակներում (արհեստանոցներում), որը միաժամանակ ե՛լ աշխատավայր էր ե՛լ վաճառքի կէտ: Նման իրողութիւնը Վան-Վասպուրականում առկայ էր արդէն միջնադարում. «արհեստավորի գոյութիւնը պայմանավորուած էր նրա արտադրածի իրացմամբ: Այս հանգամանքը արհեստավորին ստիպում էր անձամբ վաճառել իր արտադրածը: Ուստի պէտք է կարծել, որ Վասպուրականում արհեստավորի գործանոցը միաժամանակ թէ՛ արտադրավայր էր եւ թէ՛ արտադրածը վաճառելու սկզբնակէտ: Շուկայում արհեստավորի արտադրանքի իրացումը միաժամանակ ցոյց է տալիս, որ շուկան արդէն պահանջարկ էր ներկայացնում արհեստավորական արտադրանքի նկատմամբ:

Ֆէոդալական իրաւահայեցողութեամբ քաղաքները առաւելութիւն ունէին շէնքերի նկատմամբ, քաղաքաբնականները՝ գիւղաբնականների: Սա վկայում է նաեւ քաղաքացիների զբաղմունքի՝ արհեստագործութեան կարեւորութեան մասին»:⁴⁶

Արհեստագործութեան զարգացումը, արհեստավարժ արհեստավորների ու վարպետների մեծ թիւը, արտադրող ապրանքի պահանջարկը արդէն ժթ. դարի կէսերից նպաստաւոր պայմաններ ստեղծեցին ձեռագործների եւ գործարանների առաջացման համար: Ըստ ժամանակի մամուլի

տուեալների քաղաքը 1850-ական թթ. ունեցել է. «կաշիի ու չթի հոյակապ գործարաններ և մեծ հոյակապ բաղնիս մը...»:⁴⁷ 1870թ. Թոխմախեան եղբայրները հիմնել են կտաւագործական արհեստանոց: 1880-ական թթ. հիմնուել են Քափամաճեանների, Չթչոց եւ այլ գործարանները, որոնք արտադրում էին ոչ միայն աբա, այլեւ շալ, կտաւ, բրդեայ նուրբ, գունազեղ ու նախշազարդ կտորներ, բամբակեայ գործուածքներ, մանուսա եւ այլն: Նոյն ժամանակներում Վանում հիմնադրւում են նաեւ մի քանի կաշեգործական ձեռնարկութիւններ, որոնցից նշանաւոր էր Պարթեւեանինը: Ի. դարի սկզբին քաղաքն ունեցել է 100 կտաւագործական արհեստանոց, որտեղ աշխատել է 1500 մարդ: Զարգացել է նաեւ կահոյքի արտադրութիւնը: Միայն այս բնագաւառում արհեստավորների թիւը անցել է 3800-ից:⁴⁸ Իհարկէ դժուար է ասել, թէ ինչպիսին են եղել այդ գործարաններն ու ձեռնարկութիւնները, քանի որ արտադրանքի տեսակների եւ քանակի, ինչպէս նաեւ նրանում եղած արտադրական կենցաղի մասին տեղեկութիւններ չեն պահպանուել:

Նկատի ունենալով քաղաքի բնակչութեան արհեստավարժութիւնը, դեռեւս 1895թ. ամերիկեան միսիոներները եւս քաղաքում բաց արեցին արհեստանոցներ, որտեղ. «բամբակէ թել մանելու համար կը գործեն 1000 ճախարակ, կտաւ և շալ գործելու համար կը բանին 200 հոր, հագուստ կարելու համար կ'աշխատին 100 ընտանիք, 15 վարպետ հագուստ կը ձեւեն, 20 ընտանիք գուլպայ կը հիւսեն, 60 անձ բամբակ ու բուրդ կը գզեն, 70 անձ մասրա կը լեցնեն, 10 կին վերմակ կը կարեն, բացի

46 Վ. Վարդանեան, Արհեստագործութեան զարգացումը Վասպուրականում, էջ 38:

47 «Արծուի Վասպուրականի», 1858, № 7, էջ 214:

48 Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ, հրատ., հ. VI, Երեւան, 1981, էջ 61-62:

աստի 40 աշխատաւոր կայ հացի փուռերուն մէջ»:⁴⁹

Արհեստների զարգացումը Վանում պայմանաւորուած էր նաեւ դպրոցներում ու ուսումնարաններում դրանց դասաւանդման փաստով: 1903 թ. տուեալներով Վանի բոլոր վարժարաններում սովորողների թիւը կազմում էր 1680 մարդ (1180 արական եւ 500 իգական), չհաշուած երկու որբանոցների (60 ար. եւ 70 իգ.) եւ օտար կրթական հաստատութիւնների (երկու սեռի 917) սաներին:⁵⁰ Սկսած 1884 թ. Վանի Կեդրոնական վարժարանի աշակերտներին սկսեցին ուսուցանել հիւսնութիւն, ատաղձագործութիւն կամ կահոյքագործութիւն: Երամեան վարժարանի աշակերտները սովորում էին կահագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն: Որբանոցի սաների համար Այգեստանի ծայրամասում բացուած արհեստանոցներում տղաներին սովորեցնում էին «...մանուսայագործութիւնն իր յարակից ճիւղերով», իսկ աղջիկներին՝ գորգագործութիւն:⁵¹

Աղջիկներին սովորեցնում էին նաեւ գործուածքի այլ տեսակներ՝ ասեղնագործութիւն, ժանեկագործութիւն, չիւղագործութիւն: Աղջիկների ամերիկեան դպրոցն, օրինակ, «բոլոր գիտութիւններ չունէր, բայց ատոր փոխարէն ձեռագործ եւ կար ու ձեւ կը սովորեցնէր»:⁵²

Հնարաւոր էէ մեկ յօդուածի սահմանում հանգամանօրէն ներկայացնել քաղաքի տնտեսական կեանքն իր ողջ համալիրով, ուստի չենք անդրադարձել մի շարք հարցերի՝ արհեստաւորական կազմակերպութիւնների (էսնաֆութիւնների), արհեստաւորների աստիճանակարգի ու մի-

ջանձնային յարաբերութիւնների, զբաղմունքով պայմանաւորուած ազգանուանական ձեւերի, արհեստների հետ կապուած հաւատալիքների եւ այլ հարցերի պարզաբանմանը:

Ամփոփելով պէտք է նշել, որ չնայած 1915թ. Վանի հայութիւնը օտարուեց իր բնօրրանից, սակայն իրեն յատուկ արհեստների ու արուեստի զարգացման ընթացքը կանգ չառաւ: Վանեցի վարպետները շարունակեցին աշխատել ու ստեղծագործել: Ուր էլ նրանք հաստատուեցին, ստեղծեցին նոյնօրինակ բարձրարժէք ու բարձրորակ իրեր ու առարկաներ, որոնցով ճանաչուեցին ու գնահատուեցին նաեւ նոր բնակավայրերում: Արեւելեան Հայաստանի գաղթած ոսկերիչները Թիֆլիսում հիմնեցին «Վան» արհեստանոցը, Դիլիջանում վանեցի կահոյքագործները բացեցին եւրոպական կահոյքի արհեստանոց, 1920-ական թթ. Երեւանում արծաթագործութեան ջատագովներն էին Վ. Հացագործեանը, Վ. եւ Գ. Դիոնեսեանները, Ժանեկագործութեան բնագաւառում՝ Ս. Զրբաշեանը եւ այլք:

Վան-Վասպուրականի տնայնագործութիւնն ու արհեստները եւ յատկապէս դրանց արտադրանքը հայ ժողովրդի մշակութային ժառանգութեան հարուստ եւ բարձրարժէք մասն է կազմում: Իրենց բազմազան տեսականիով, պատրաստման կատարեալ որակով, ճաշակով ու գեղարուեստական իւրայատուկ լուծումներով, վասպուրականեան իրերն ու առարկաներն այսօր պահպանւում ու ցուցադրւում են հայաստանեան եւ օտարերկրեայ թանգարաններում՝ ներկայացնելով ոչ միայն տարածաշրջանի, այլեւ ողջ հայութեան ստեղծագործ էութիւնը:

49 Տե՛ս «Մշակ», 1896, № 26, 2 մարտի:

50 Տե՛ս Վիճակագրութիւն Վանայ ընդհանուր դպրոցներում, «Բիւզանդիոն», 1903, № 1997:

51 Նոյն տեղում:

52 Տե՛ս Հ. Պողոսեան, Վասպուրականի պատմութիւնից, էջ 311, 316, 319: